



Թարգմանեց՝ **Հասմիկ Սարիբեկյանը,**

«Մոնավա» Չ/կ անգլերեն լեզվի ուսուցչուհի

Մեթոդը վերցված է՝ Lance G. King, MYP ATL skills workbook, 2016

Համագործակցային հմտության զարգացում

Էմպատիա-Ապրումակցում

Արդյունավետ հաղորդակցման և համագործության համար անչափ կարևոր է հաշվի առնել դիմացինի կարծիքը, տեսակետը, մտքերը և հույզերը: Դրանք չափազանց կարևոր նշանակություն ունեն սոցիալական փոխհարաբերությունների և միջանձնային կապերի ձևավորման համար: Հետևաբար, առավել քան կարևոր է ունենալ ապրումակցման բարձր մակարդակ. այն դյուրացնում է փոխըմբռնումը և թույլ է տալիս մարդկանց ընդունել այնպիսին, ինչպիսին նրանք կան:

Վարժություն 1

Իմ կոշիկներով առնվազն մեկ մղոն անցեք-1:

ա/ աշխատել գույզերով,

բ/ ընտրել որևէ հոդված կամ քննարկել մի իրավիճակ, որ ենթադրում է տեսակետների տարբերություն և բախում,

գ/ տեսակետներից մեկի շուրջ կատարել որոշակի հետազոտություններ և անել գրառումներ: Այնուհետև այդ հետազոտությունների հիման վրա պայմանական հակառակորդի հետ ծավալել քննարկում,

Ապրումակցում





ե/ քննարկումը ծավալել հավասար պայմանների սկզբունքով, որպեսզի երկուստեք լսելու և արտահայտվելու հնարավորություն ընձեռվի, և քննարկվի տեսակետի էությունը, բովանդակությունն ամբողջությամբ և լիարժեքորեն,

զ/ այդո՞ք ձեզանից որևէ մեկը կհաղթի քննարկման մեջ,

է/ շարունակել քննարկումը՝ դերերի փոփոխության պայմաններում,

ը/ կարդալ պայմանական հակառակորդի տեսակետները և փորձել պաշտպանել դրանք այնպես, ասես դրանք Ձեր սեփական տեսակետներն են ,

թ/ կրկին քննարկել խնդիրը, բայց այս անգամ պաշտպանելով հակառակորդի տեսակետը,

ժ/ արդյո՞ք այս անգամ էլ կհաղթեք դուք և Ձեր տեսակետը,

ի/ մտածել՝ արդյո՞ք ի վիճակի եք հավասարապես դիտարկել խնդիրը երկկողմանիորեն,

լ/ արդյո՞ք որևէ փոփոխություն զգացել եք խնդիրը երկկողմանի քննարկման ենթարկելուց հետո:


Վարժություն 2

Անցեք իմ կոշիկներով առնվազն մեկ մղոն-2:

ա/ աշխատել գույգերով,

բ/ Վերցնել Ձեր կամ Ձեր պայմանական հակառակորդի կողմից կառուցված փաստարկներից յուրաքանչյուրից մի մաս,

գ/ այդ քննարկմանը վերաբերվող նյութեր կարդալ և անել որոշակի հետազոտություններ, եթե դրա կարիքը կա, մինչև կկարողանաք պաշտպանել այդ տեսակետը և վիճարկել այն Ձեր տեանկյունից,





դ/ պայմանական հակառակորդի հետ վիճարկել խնդիրը Ձեր հետազոտությունների և Ձեր կարդացած տեղեկատվության հիման վրա՝ հավասարության սկզբունքի սահմաններում՝ հավասարապես լսելի լինելով և արտահայտվելով,

ե/ արդյո՞ք Ձեզանից որևէ մեկը իրեն կարող է իսկապես հաղթող զգալ,

զ/ այնուհետև փոխվեք դերերով,

է/ կարդալ պայմանական հակառակորդի տեսակետները և փորձել պաշտպանել դրանք այնպես, ասես դրանք Ձեր սեփական տեսակետներն են,

թ/ արդյո՞ք կհաղթի միևնույն տեսակետը, որը հաղթեց նախորդ դեպքում

ժ/ մտածել, թե ինչ կլիներ, եթե դուք խնդիրը դիտարկեիք երկկողմանի,

ի/ արդյո՞ք որևէ փոփոխություն զգացիք՝ խնդիրը երկկողմանի ուսումնասիրելուց հետո, հատկապես այն տեսակետի առումով, որի հետ նախկինում խնդիր ունեիք:

Վարժություն 3

Դիմացի մարդու հավատալիքները

Էմպատիան՝ ապրումակցումը, ենթադրում է դիմացի մարդու տեսակետների և հավատալիքների նկատմամբ հանդուրժողականություն: Դուք չպետք է վիճեք դիմացինի տեսակետի կամ հավատալիքի բովանդակության շուրջ, այլ դրանց նկատմամբ ապրումակցում դրսևորելու միջոցով փորձեք բացահայտել նրա աչքերում թաքնված աշխարհը:

ա/Ի մի բերելով գիտության, մշակույթի, կրոնի, ընտանիքի վերաբերյալ Ձեր հավատալիքները՝ փորձեք ցուցակագրել դրանցից ամենակարևորները

բ/ յուրաքանչյուրի դիմաց գրեք մեկ բան, որին ինչ-որ մեկը կարող է հավատալ, ինչը կարող է հակառակ լինել նրան, ինչին դու հավատում ես,

գ/ փորձեք պատկերացնել Ձեզ այնպիսի մեկի դերում, ով հավատում է նրան, ինչը հակառակ է ձեր մտքին: Ի՞նչը կկարևորվի ձեզ համար, ի՞նչի մասին դուք կսկսեք մտածել, ի՞նչ կզգաք ձեզ հակառակ տեսակետով մեկին հանդիպելիս,

դ/ ո՞րքան դժվար է այս ամենը Ձեզ համար:

